

1 SULUSN3

S-80

14 JUL 2009

Հրատարակ. „ՏԱՐՈՒ“ գրավածառանցի № 4.

Լ. Ն. ՏԵՂՄԱՆ

# ՍԻՐԵՑՔ ՄԻՄԵԱՆՑ

կի՞ն է 7 կի՞զ.

Թարգմ. Դ. Միմէօնեանց

—

Թ ի ք լ ի ս

Տպարան «ՀԵՐՄԵՍ», Մուխրանեան փող., № 13.

1911

23 AUG 2013

Հրատարակ. „ՏԱՐՈՆ“ գրավածառանցի № 4.

132

ԽԱՌԵՐԱՐ

S-80 Լ. Ն. ՏԵՂՄԱՆՅԱ  
ՄՐ

## ՍԻՐԵՑՔ ՄԻՄԵԱՆՑ

0227 15/12-38

1002  
1664  
1691

Թարգմ. Գ. Սիմեոնեանց

—

Թ ի գ լ ի ս

Տպարան ՇՀԵՐՄԵԽԱ, Մուխրանեան փող., № 13.

1911



## ՍԻՐԵՑԷ ՄԻՄԵԱՆՅ

(Դիմում Կրիտասարդներին)

Ես կուզէի, որպէս հրաժեշտի խօսք,  
 (իմ հտակում ամեն աեսակցութիւն  
 մարդկանց հետ հրաժեշտ է) կարծօրէն  
 ասել ձեզ, թէ իմ հասկացողութեամբ  
 ինչպէս պէտք է ապրեն մարդիկ, որ-  
 պէսզի մեր կեանքը չլինի չարիք և  
 դառնութիւն,—ինչպէս այժմ թւռւմ է  
 շատերին,—այլ լինի այն, ինչ-որ ցան-  
 կանում է Աստուած, և ինչ-որ մենք  
 ամենքս ցանկանում ենք, բարիք և  
 ուրախութիւն, հենց ինչպէս որ նա  
 պէտքէ լինի:

Բանն այն է, թէ ինչպէս է մարդ  
 հասկանում իր կեանքը: Եթէ հասկա-  
 նանք կեանքն այնպէս, որպէս թէ այդ  
 կեանքը տուած է ինձ իմ մարմի մէջ,

Յովհաննէսին, Պետրոսին, Մարիամին  
և թէ կեանքի հարցն էլ հէնց այն է, որ  
ըստ կարելոյն շատ ուրախութիւններ,  
բաւականութիւններ, երջանկութիւն  
ձեռք բերենք այդ մեր «Ես»-ի, Յովհաննէսի,  
Պետրոսի, Մարիամի համար  
ապա կեանքը միշտ և ամենքի համար  
կըլինի մի գժբախտ և չարամիտ բան։  
Կեանքը կըլինի գժբախտ և չարամիտ  
այն պատճառով, որ այն ամենը, ինչ-  
որ ուզում է մի մարդ իր համար, միե-  
նոյնն ուզում է և իւրաքանչիւր այլ ոք։  
Եւ որովհետև իւրաքանչիւր ոք իր հա-  
մար ամեն տեսակի բարիք, որքան  
ննարաւոր է, շատ է ուզում և այդ բա-  
րիքը բոլորի համար էլ մէկ է, ապա  
այդ բարիքից երբէք ամենքին բաժին  
չէ համում։ Եւ եթէ մարդիկ ապրում  
են իւրաքանչիւրը իրեն համար, ապա  
անխուսափելի է, որ նրանք մէկ մէկուց

իւլին, մէկ մէկու հետ կոռուեն, չարա-  
նան և դրանից նրանց կեանքը չէ դառ-  
նում երջաննիկ։ Իսկ եթէ մարդիկ եր-  
բեմն ձեռք են բերում այն, ինչ որ կա-  
մենում են, ապա այդ նրանց աչքին  
շատ քիչ է երկում, ուստի նրանք աշ-  
խատում են ձեռք բերել աւելի և աւե-  
լի, և բացի գրանից նրանք երկիւղ էլ  
են կրում, վայ թէ այն, ինչ-որ ար-  
դէն ձեռք են բերել, յափշաակեն ու-  
րիշները և նախանձում են նրանց, ո-  
րոնք կարողացել են ձեռք բերել այն,  
ինչ-որ իրանք չունին։

Այսպէս որ, եթէ մարդիկ հասկանում  
են իրենց կեանքը իւրաքանչիւրը իր  
մարմնի մէջ, ապա այդպիսիների կեանքը  
չէ կարող գժբախտ չլինել։ Հէնց այդպէս  
էլ է նա այժմ բոլոր այդպիսի մարդ-  
կանց համար։ Իսկ կեանքն այդպէս,  
այսինքն՝ գժբախտ, չպէտք է լինի։

\* կեանքը մեզ տուած է, որպէս բարիք  
և մենք բոլորս էլ այդպէս ենք հաս-  
կանում կեանքը իսկ որպէսզի կեանքը  
լինի այդպէս, մարդիկ պէտք է հաս-  
կանան, որ մեր ներկայ կեանքը երբէք  
մեր մարմնի մէջ չէ, այլ այն ոգու մէջ,  
որ ապրում է մեր մարմնու մ և որ մեր  
բարիքը բնաւ այն չէ, որ շահենք և  
անենք այն, ինչ-որ մարմինն է ուզում,  
այլ այն է, որ անենք այն, ինչ-որ այդ  
ողին է ուզում, որ միշտ միւնոյնն է  
և ապրում է մեր մէջ այսպէս, ինչպէս  
և բոլոր մարդկանց մէջ: Իսկ այդ ոգու  
ուզածն է բարիք իրենց ոգուն: Եւ ո-  
րովինետեւ այդ ոգին բոլոր մարդկանց  
մէջ էլ միւնոյնն է, ապա և նա ցան-  
կանում է բարիք բոլոր մարդկանց: Իսկ  
բոլոր մարդկանց բարիք ցանկանալ՝ ա-  
սել է սիրել մարդկանց: Իսկ մարդկանց  
սիրել ոչ ոք և ոչինչ խանդարել չէ կա-

րոդ և ողբան մարդ աւելի է սիրում,  
այնքան նրա կեանքը դառնում է ազատ  
և ուրախալի:

Այնպէս որ գուրս է գալիս, թէ մարդ  
որքան էլ ջանք գործադրէ, նրա ոյժե-  
րից միշտ վեր է շահել մարմինը, որով-  
հետեւ այն, ինչ-որ հարկաւոր է մարմ-  
նին, ամեն ժամանակ չէ կարելի ճա-  
րել. իսկ եթէ ճարենք էլ, պէտք է  
կոռւենք ուրիշների հետ. իսկ ոգուն  
շահել մարդ միշտ էլ կարող է, որով-  
հետեւ ոգուն հարկաւոր է միմիայն սէր.  
իսկ սիրոյ համար ոչ մէկի հետ կոռւել  
պէտք չէ, և ոչ միայն պէտք չէ կոռւել  
այլոց հետ, այլ ընդհակառակը, որ-  
քան շատ ես սիրում, այնքան աւելի  
ես հոգեպէս մօտենում ուրիշ մարդ-  
կանց: Այնպէս որ ոչինչ չի կարող  
խանդարել սիրուն և ամեն մարդ ողքան  
աւելի է սիրում, այնքան աւելի ու

աւելի երջանիկ և ուրախ է լինում ոչ  
միայն ինքը, այլ նա ուրիշներին էլ  
է դարձնում երջանիկ և ուրախ:

Ահա, հէնց այդ էլ, սիրելի եղբայր-  
ներ, կուգէի ձեզ ասել, որպէս հրա-  
ժեշտի խօսք, ասել այն, ինչ-որ ուսու-  
ցել են ձեզ բոլոր սուրբ և իմաստուն  
մարդիկ և Քրիստոսը ու աշխարհիս բո-  
լոր իմաստամէրները. այսինքն այն, թէ  
մեր կեանքի դժբախտութեան պատ-  
ճառը մենք ինքներս ենք, թէ այն ոյ-  
ժը, որ առաքել է մեզ կեանքի մէջ և  
որին մենք կոչում ենք Աստուած, ու-  
ղարկել է մեզ ոչ թէ նրա համար, որ-  
պէսզի մենք տանջուէինք, այլ նրա հա-  
մար, որպէսզի ունենայինք այն իսկ  
բարիքը, որ մենք ամենքս էլ ցանկա-  
նում ենք և որ մենք չենք ստանում  
այդ մեզ նախորդուած բարիքը միայն  
այն ժամանակ, երբ հասկանում ենք

կեանքը ոչ այնպէս, ինչպէս պէտք է և  
անում ենք ոչ թէ այն, ինչ-որ պէտք է:

Իսկ մենք գանգատում ենք, որ մեր  
կեանքը լաւ չէ կազմակերպուած և  
չենք մտածում, որ ոչ թէ մեր կեանքն  
է վատ կազմակերպաւած, այլ որ մենք  
այն չենք անում, ինչ-որ պէտք է ա-  
նենք, իսկ այդ միևնոյն է թէ հարբանը  
սկսէր գանգատել, թէ ինքը խմում  
է այն պատճառով, որ շատ պանդոկներ  
և գինետներ կան. այն ինչ պանդոկ-  
ներն ու գինետները շատ են լոկ այն  
պատճառով, որ հէնց իր նման արբե-  
ցողներն են շատացել:

Կեանքը չնորհած է մարդուն, որպէս  
մի բարիք, միայն թէ նրանք կարողա-  
նային նրանից օգտուել այնպէս, ինչ-  
պէս պէտք է օգտուել: Միայն թէ  
մարդիկ ապրէին ոչ թէ իրար առելով,  
այլ սիրով և կեանքը բոլորի համար

կդառնար մի անհատնում բարիք:

Անաւասիկ այժմ ամեն կողմից միևնույն բանն են կրկնում: Մեր կեանքը, ասում են, վատ է և դժբախտ այն պատճառով, որ նա լաւ չէ կազմուած, — եկեք վերափոխենք վատ կազմը լաւ և մեր կեանքն ել լաւ կըլինի:

Սիրելի եղբայրներ, չհաւասար դրան, չհաւասար այն բանին, որ այս կամ այլ կազմից ձեր կեանքը կարող է գառնալ վատթար կամ աւելի լաւ: Ել չեմ ասում, որ բոլոր այն մարդիկ, որոնք հոգում են կեանքի աւելի լաւ կազմակերպութեան մասին, իրաք այնքան ել համամիտ չեն. մի քանիսը առաջարկում են մէկ կազմ՝ համարելով այդ լաւագոյն: Իսկ միւսները, թէ այդ կազմը ամենավատն է, և որ լաւ է միշյն այն, ինչոր իրանք եւ առաջարկում, եղբորդներն ել այդ են առ ոչինչ հա-

մարում և առաջարկում են իրանց ամենալաւը ու այդպէս շարունակ: Բայց եթէ նոյն իսկ լիներ էլ մի այդպիսի կազմակերպութիւն, եթէ նոյնիսկ ընդունենք, որ լաւագոյն կազմակերպութիւնը գտնուած է, հապա ի՞նչպէս առնենք, որ մարդիկ ապրէին այդ կազմի համաձայն, ի՞նչպէս պահել կեանքի այդ լաւագոյն կազմը, երբ մարդիկ արդէն սովորել են և սիրում են վատ ապրել: Թէ չէ մենք այժմ սովորել և սիրում ենք վատ ապրել, ինչ էլ որ չսկսենք անել, իսկոյն ապականում ենք, սակայն առում ենք, թէ լաւ կապրենք, երբ կեանքի կազմակերպութիւնը լինի լաւ: Բայց ի՞նչպէս կարելի է ունենալ կեանքի լաւ կազմ, երբ մարդիկ իրենք վատ են:

Այնպէս որ, եթէ կայ էլ կեանքի մի այդպիսի լաւ կազմակերպութիւն, առ

պա որպէսզի հասնել դրան, մարդիկ իրենք պէտք է լաւ լինին: Իսկ ձեզ խոստանում են լաւ կեանք այն ժամանակ, երբ դուք, որ առանց այն էլ վատ կեանքով էք ապրում այժմ, սկսէք էլի կոռւել մարդկանց հետ, բռնութիւն դործ դնել և նոյն իսկ սպանել մարդկանց այդ լաւ կազմակերպութիւնը կեանքի մէջ մացնելու համար, այսինքն՝ ձեզ խոստանում են լաւ կեանք, երբ դուք պիտի գառնաք աւելի վատ, քան այն այժմ էք:

Զհաւատաք, չհաւատաք դրան, սիւրելի եղբայրներ: Կեանքը բարելաւելու համար կայ միմիայն մի միջոց, որ հէնց մարդիկ իրենք լաւ լինին: Մարդիկ որ լաւանան, արդէն ինքն իրեն կը հաստատուի այն կեանքը, որով և պէտք է ապրեն լաւ մարդիկ:

Զեր և բոլոր մարդկանց փրկութիւնը բնաւ կեանքը յանցաւոր միջոցներով և բռնի կերպով կազմակերպելու մէջ չէ, այլ հէնց ձեր հոգու կազմակերպութեան մէջ: Միմիայն հոգու այդպիսի կազմակերպութեամբ իւրաքանչիւր մարդ ձեռք կը բերէ իրեն և ուրիշների համար ամենամեծ բարիք և կեանքի լաւագոյն կազմակերպութիւնը, որպիսին մարդիկ միմիայն կարող են ցանկանալ: Այն իսկական բարիքը, ինչոր որոնում է իւրաքանչիւր մարդկային սիրտ, տուած է մեզ ոչ թէ կեանքի բռնութեան վրայ յենուած որեւէ ապագայ կազմակերպութեան մէջ, այլ հէնց այժմ, մեզ բոլորիս, ամենուրեք, կեանքի և թէ անգամ մահուան ամեն ըոպէին և որին կարելի է հասնել միմիայն սիրոյ միջոցով:

Այդ բարիքը տուած է մեզ ի սկզբա-

Նէ անոտի. բայց մարդիկ չեին հասկա-  
նում և վերցնում այն։ Սակայն ալժա-  
հասել է ժամանակը, երբ մենք չենք կա-  
րող այլկա չընդունել այն, չէ կարելի  
չընդունել նախ՝ որովհետև մեր կեան-  
քի այլանդակութիւններն ու տանջանք-  
ները, մեզ էն օրն են գցել, որ մեր  
կեանքը դառնում է անտանելի լինելու  
չափ ծանր։ Երկրորդ՝ որ մեր առաջ  
հետպհետէ արծարծւող Քը իստոսի ճշմա-  
րիտ վարդապետութիւնը դարձել է հիմա  
այնքանի պարզ, որ մեր փրկութեան հա-  
մար չենք կարող չճանաչել և չընդունել  
այն։ Մեր փրկութիւնը այժմ միմիայն  
մի բան է պահանջում։ ընդունել, որ  
մեր ճշմարիտ կեանքը մեր մարմնի մէջ  
չէ, այլ այն Աստուածային ոգու մէջ,  
որ մեր մէջն է ապրում և որ բոլոր  
այն ջանքերը, որոնք մենք առաջ գործ  
էինք դնում մեր մարմնական, ինչպէս

անհատական, նոյնպէս և հասարակա-  
կան կեանքը բարելաւման նպատակով,  
մենք կարող ենք և պարտաւոր ենք թա-  
փել միմիայն մի, մարդուն հարկաւոր  
և նշանակալից գործի համար, այն բա-  
նի, որ իւրաքանչիւր որ կրթէ և հաս-  
տատէ իր մէջ սէր ոչ միայն դէպի մեզ  
սիրողները, այլ ինչպէս առում է Քը իս-  
տոս, դէպի բոլոր մարդիկ և առանձ  
նապէս դէպի մեզ օտար մարդիկ, դէ-  
պի մեզ ատողները։

Մեր կեանքն այժմ այնքան հեռու  
է դրանից, որ մեր բոլոր ջանքերի փո-  
խազբութիւնը աշխարհային հոգսերից  
դէպի մի չտեսնուած, մեզ արտասովոր  
գործ—դէպի սէր առ բոլոր մարդիկ—  
մի բուէ մեզ անկարելի է թւում։

Բայց այդ միայն թւում է այդպէս.  
սէրը դէպի բոլոր մարդիկ, նոյն իսկ  
դէպի մեզ ատողները շատ աւելի յա-

տուկ է մարդու հոգուն, քան կոխու  
մերձաւորների նեա և տաելութիւնը  
դէպի նրանց։ Կեանքի իմաստի հասկա-  
ցողութեան փոփոխութիւնը ոչ միայն  
անկարելի չէ ներկայումս, այլ ընդհա-  
կառակը անկարելի է այլև շարունա-  
կել այն չարացած կեանքը, որաեղ բո-  
լորը կանդնած են բոլորի դէմ և որսվ  
մենք այժմ ապրում ենք։ Այդ փոփո-  
խութիւնը ոչ միայն անկարելի չէ, այլ  
ընդհակառակը նա միմիայն կարող է  
ազատել մարդկանց այն բոլոր թշուա-  
ռութիւններից, որսնք այնքան տան-  
ջանքներ են պատճառում մարդկանց և  
այդ պատճառով էլ այդ փոփոխութիւ-  
նըն անխռասափելիօրէն վաղ թէ ուշ  
պէտք է իրականանայ։

Սիրելի եղբայրներ, ինչնւ, ինչի՞ հա-  
մար էք գուք ձեզ աանջում։ Յիշեցէք  
միմիայն, որ ձեզ նախորոշուած է մե-

ծագոյն բարիք և վերցրէք այն։ Ամեն  
ինչ ձեր մէջ է։ Այդ այնքան դիւրին է,  
այնքան պարզ և այնքան ուրախալի։

Բայց, թերեւս, չարբաշ, խեղճ,  
տանգուած մարդիկ ասեն։ «Այն, բայց  
այդ կարսդ է լաւ լինել հարուստների  
և տիրողների համար։ Հարուստներին  
և տիրողներին դիւրին է թշնամիներին  
սիրել, քանի որ այդ իսկ թշնամիները  
նրանց իրաւունքի տակն են։ Սակայն  
այդ գժուար է մեզ՝ չարբաշներիս,  
խոշտանգուածներիս համար»։ Բայց այդ  
ճիշտ չէ։ Սիրելի եղբայրներ, փախել  
կեանքի մասին ունեցած հասկացողու-  
թիւնը հաւասարապէս հարկաւոր է թէ  
տիրողներին, հարուստներին և թէ ստո-  
րագրեալներին, չունեարներին։ Եւ այդ  
աւելի հեշտ է ստորագրեալների և չու-  
նեորների համար, քան հարուստների։  
Ստորագրեալներին և չունեար մարդ



կանց հարկաւոր է միայն՝ չփոխելով  
իրանց գրութիւնը ոչ միայն չփորձել  
սիրոյ հակառակ բան, այլև չըմանակ-  
ցել այդ գործերի մէջ, որպէս բռնու-  
թեան գործեր, և այդ ամբողջ սիրոյ  
հակառակ կազմը կընկնի ինքն իրեն.  
իսկ ինչ վերաբերում է տիրողներին՝  
նրանց շատ աւելի դժուար է ընդունել  
և գործադրել սիրոյ ուսմունքը։ Սիրոյ  
ուսմունքը գործադրելու համար նրանք  
պէտք է հրաժարուեն իրենց ունեցած  
իշխանութեան, հարստութեան գայթա-  
կութիւններից, և այդ նրանց համար  
շատ դժուար է. այն-ինչ չունեսորներին  
և ստորագրեալներին հարկաւոր է  
միայն չփորձել նորանոր բռնութիւն-  
ներ և, որ գլխաւորն է, չմասնակցել  
հներին։

Ինչպէս աճում է իւրաքանչիւր մարդ,  
այնպէս աճում է և մարդկութիւնը։

Սիրոյ գիտակցութիւնը աճել է, աճում  
է նրա մէջ և մեր օրերին աճելով հա-  
սել է այն աստիճանին, որ մենք չենք  
կարող այլևս չտեսնել, որ նա է մեզ  
փրկելու և նա պէտք է դառնայ մեր  
կեանքի հիմքը։ Ո՞չ ապաքէն այն, ինչ-  
որ կատարւում է այժմ—զա մեռնող  
բռնի, չար և անսէր կեանքի վերջին  
ցնցումներն են։

Այժմ արդէն չէ կարող չլինել պարզ,  
որ բոլոր այդ կուները, ամբողջ այդ  
ատելութիւնը, բոլոր այդ բռնութիւնով  
հաստատուող կազմակերպութիւնները,  
այդ բոլորն անիմաստ, և բացի հետզե-  
տէ աւելացող թշուառութիւններից՝ ու-  
րիշ ոչ մի բանի չհասցնող խարէութիւ-  
ններ են։ Եւ չի կարող պարզ չլինել,  
որ միակ, ամենահասարակ և այդ ամե-  
նից հեշտ ազատուելու միակ միջոցը՝  
բոլոր մարդկանց կեանքի հիմնական

սկզբունքը—սէրը—գիտակցելն է, այն  
սկզբունքը, որ անխուսափելիօրէն, ա-  
ռանց որևէ ճիգերի, մեծագոյն չարիքը  
փոխարինում է մեծագոյն բարիքով:

Կայ մի աւանդութիւն, թէ Յովհան-  
նէս առաքեալը՝ հասնելով խորին ծերու-  
թեան ամբողջովով մի զգացմունքով  
էր տուգորուած և միշտ միհնոյն խօս-  
քերով էր այն արտայայտում ասելով  
միայն մի բան. «Մանկունք, սիրեցէք  
միմեանց»։ Ահա այդպէս է արտա-  
յայտուել ծերութիւնը, այսինքն կեան-  
քի մինչև մի որոշ սահման ապրած մի  
մարդու կեանքը։ Ճիշտ այդպէս էլ  
պէտք է արտայայտուի մարդկութեան  
կեանքը, որ ապրել է արդէն մինչև  
մի որոշ սահման։

Եթւ այդ այնքան հասարակ բան է,  
այնքան պարզ. դու ապրում ես, այ-  
սինքն ծնուել ես, աճում ես, առնա-

նում, ծերանում ես և էս է պիտի  
մեռնես։ Միթէ կեանքիդ նպատակը  
կարող է լինել քո մէջ—հաւանօրէն ոչ։  
Հապա ես ի՞նչ եմ, հարցնում է մարդ  
ինքն իրեն, ի՞նչ եմ ես։ Եւ պատաս-  
խանը մի է. ես մի ինչ որ սիրող էակ  
եմ—սկզբում կարծես թէ միայն ինձ  
սիրով, բայց բաւական է մի քիչ ապ-  
րել մի քիչ մտածել տեսնելու համար,  
որ սիրել իրեն, կեանքի միջով անցնու-  
ղին, մեռնաղին անկարելի է և նպատակ  
չունի։ Զգում ես, որ ես պէտք է  
սիրեմ և սիրում եմ ինձ։ Բայց սիրե-  
լով ինձ ես չեմ կարող չզգալ, որ իմ  
սիրոյ առական դրան անարժան է։  
սակայն չըսինել ես չեմ կարող։ Միրոյ  
մէջ է կեանքը։ Հիմա ի՞նչպէս անել։  
Սիրել ուրիշներին, մերձաւորներին,  
ընկերներին։ Սկզբում թւում է, թէ  
այդ բաւարարութիւն է տալիս - սիրոյ

պահանջին, բայց այդ բոլոր մարդիկ  
նախ կատարեալ չեն, երկրորդ՝ փոփո-  
խւում են և, որ զիմաւորն է, մեռ-  
նում: Հասլա ի՞նչ սիրել: Եւ պատաս-  
խանը մի է. սիրել բոլորին, սիրել  
սիրոյ սկզբունքը, սէրը սիրել, սիրել  
Աստծուն: Սիրել ոչ թէ այն մարդու  
համար, որին սիրում ես, այլ ճէնց սի-  
րոյ համար: Բաւական է հասկանալ  
այդ և իսկոյն ոչնչանում է մարդկային  
կեանքի ամբողջ չարիքը և կեանքի  
իմաստը դառնում է ակնյայնի և  
զուարթ:

«Այն, այդ շատ լաւ բան կը ինչը,  
Սրանից լաւ, ել ՞նչ—կասեն մարդիկ:  
Լաւ կը ինչը սիրել և ապրել սիրոյ հա-  
մար, եթէ ամենքն էլ այդպէս ապրէ-  
ին: Թէ չէ ես ապրեմ սիրոյ համար,  
ամեն ի՞նչ ուրիշին տամ, իսկ ուրիշ-  
ները ապրեն իրանց համար, մարմնի

համար. Ի՞նչ օրը կընկնեմ ես. և ոչ  
մենակ ես, այլև ընտանիքս, նըանք,  
որոնց պիրում եմ և չեմ կարող չսիրել:  
Սիրոյ մասին վաղուց է որ խօսում են,  
բայց ոչ ոք չէ հետեւում: Եւ հետեւել  
էլ չէ կարելի: Ըստիրել իր կեանքը սի-  
րուն՝ կարելի կրկնելը միայն այն ժա-  
մանակ, երբ բոլոր մարդիկ մի ի՞նչ որ  
հրաշքով միանգամից փոխէին աշխար-  
հային, մարմն կան կեանքը կողեկան,  
Աստուածային կեանքի: Բայց այդպիսի  
հրաշք չկայ և այդ պատճառով էլ այդ  
բոլորը խօսքեր են և ոչ գործ»: Այդ-  
պէս են ասում մարդիկ իրանց հանգը-  
տացնելու համար սուտ, սովորական  
կեանքի մէջ: Նրանք ասում են այդ-  
պէս, բայց նույն խորքում նրանք գի-  
տեն, որ իրանք սխալ են: Գիտեն, որ  
այդ խորհրդածութիւնները ձիշտ չեն:  
Ճիշտ չեն, որովհետեւ միայն աշխարհա-

յին, մարմնական կեանքի օգուան է պահանջում, որ բոլոր մարդիկ յանկարծ փսխէին իրանց կեանքը. բայց այդպէս չէ ոգեկան կեանքի համար—սիրոյ դէպի Աստուած և մարդիկ։ Սէրը մարդուն բարիք է բերում, ոչ թէ իր հետմանքներով, այլ հէնց սիրոյ մէջ, տալիս է նրան բարիք բոլորովին անկախ նրանից, թէ ի՞նչպէս են վարւում ուրիշ մարդիկ և թէ առհասարակ ի՞նչ է կատարւում արտաքին աշխարհում։ Սէրը տալիս է բարիք նրանով, որ մարդ սիրելով միանում է Աստոյ հետ և ոչ միայն ոչինչ չէ ցանկանում իրան համար, այլ ցանկանում է տալ ինչ որ ունի նաև իր կեանքը ուրիշներին և այդ իրան Աստծուն յանձնելու մէջ զանում է բարիք։ Ուստի բոլոր այն, ինչ որ անում են ուրիշ մարդիկ, բոլորը, ի՞նչ-որ կարող է կատարուել աշ-

խարհիս երեսին, չէ կարող ազդեցութիւն ունենալ նրա վարմունքների վրայ։ Սիրել-նշանակում է յանձնուել Աստծուն, անել այն, ինչոր Աստուած է կամենում։ իսկ Աստուած սէր է, այսինքն ուզում է բարիք բոլորին և այդ պատճառով չէ կարող ուզել որ մարդ կորչի՝ կատարելով նրա օրէնքը։ Սիրող մարդը չսիրողների մէջ էլ չի կորչի։ իսկ եթէ կորչի էլ, ի՞նչպէս Թրիստոսը մեռաւ, խաչի վրայ, տպանրա մահը և՛ իրան է ուրախալիք, և՛ ուրիշների համար է նշանակալից, և, ոչ թէ յուսահատական ու չնչին, ի՞նչպէս լինում են աշխարհային մարդկանց մահերը։

Այնպէս որ, այն խօսքը, թէ ես սիրուն չեմ նուիրում, որովհետեւ բոլորը այդ չեն անիլ և ես կմնամ մէն նակ՝ և ուղիղ չէ, և լաւ չէ։ Այդ միհ-

նոյն է թէ մի մարդ, որ պէտք է աշ-  
խատէ իրեն և երեխաներին կերակրե-  
լու համար, չանցնի գործի այն պատ-  
ճառով, որ ուրիշները չեն աշխատում:  
Ա Սիրելի՛ եղբայրներ, ընդունենք, որ  
մեր կեանքի նպատակն է ուժեղացնել  
մեր մէջ սէրը ու թողնենք, որ աշ-  
խարհը գնայ այնպէս, ինչպէս որ ինքն  
է կամենում, այսիքն ինչպէս որո-  
շուած է նրան ի վերուստ: Վարունք  
այդպէս, և հաւատացէք ինձ, որ մենք  
ձեռք կըսերենք մեզ ամենամեծ բարիք,  
կանենք մարդկանց այն բոլոր բարու-  
թիւնները ինչ-որ միայն մենք կարող  
ենք անել:

Եւ այդ այնքան հասարակ բան է,  
այնքան պանդ, այնքան ուրախալի:  
Բաւական է, որ իւրաքանչիւր մարդ  
սիրէ ոչ միայն սիրողներին, այլ բոլոր  
մարդկանց, յատկապէս ատողներին,

ինչպէս ուսուցանում էր Թրիստոս, և  
կեանքն արդէն մի անհատնում ու-  
րախութիւն կըլինի և այն բոլոր հար-  
ցերը, որոնք մոլորուած մարդիկ փոր-  
ձում են լուծել բոնութեան միջոցով,  
ոչ միայն լուծւում են, այլ դադարում  
են գոյութիւն ունենալուց: «Եւ մենք  
դիտենք, որ մահից անցել ենք կեան-  
քին, եթէ սիրում ենք մեր եղբայրնե-  
րին: Նա, որ իր եղբօրը չէ սիրում,  
զուրկ է յաւիտենական կեանքից:   
Միայն եղբայրասէրը ունի—յաւիտենա-  
կան կեանք, որ ապրում է նրա մէջ»:  
Մի խօսք էլ, սիրելի եղբայրներ:

Ոչ մի բանի մասին չէ կարելի իմա-  
նալ լաւ է արդեօք այն՝ թէ վատ,  
քանի դեռ գործով չես փորձել այն  
կեանքի մէջ: Եթէ երկրագործին ասում  
են, թէ լաւ է հաճարը շարքերով ցա-  
նել, կամ մեղուաբոյծին, թէ լաւ է փե-

թակները շրջանակներով շինել, ապա  
խելացի երկրագործը և մեղուաբոյծը  
որպէսզի հաստատ իմանայ, թէ ուղիղ  
է արդեօք այն, ինչոր իրան ասում են,  
կըփորձէ և նայելով, թէ որքան է այդ  
արդարանում փորձավ՝ կըհետևի կամ  
չի հետեւի այն բանին, ինչոր իրեն  
առաջարկում էին.

Այդպէս է և կեանքի վերաբերեալ  
բոլոր հարցերի մէջ։ Որպէսզի ճիշտ  
իմացուի, թէ որքան գործադրելի է  
կեանքի մէջ սիրոյ ուսմունքը՝ փոր-  
ձեցէք։

Ֆ. Փորձեցէք. առէք ձեզ վրայ պար-  
տականութիւն մի որոշ ժամանակամի-  
ջոց հետևել ամեն բանում սիրոյ պա-  
հան ջումներին. ապրել այնպէս, որ միշտ  
ամենից առաջ յիշէք, թէ ամեն մար-  
դու հեա, գողի, հարբանի, կոպիտ  
կառավարչի կամ ստորեազրեալի հետ

գործ ունենալիս՝ չպէտք է շեղուել  
սիրուց, այսինքն՝ նրա հետ գործ ունե-  
նալիս մտածես ոչ թէ քո մասին, այլ  
այն, թէ ինչ է նրան պէտք։ Եւ ապ-  
րելով այդպէս մի որսշեալ ժամանա-  
կամիջոց, հարցը ձեզ արդեօք ձեզ  
այդ ծանր էր գալիս և վչացը պար-  
դեօր դուք ձեր կեանքը, թէ լաւացը իր  
և նայելով թէ ինչ հետեանք կտայ ձեզ  
փորձը՝ վճռեցէք, ճիշտ է արդեօք, որ  
սիրոյ գործադրութիւնը տալիս է կեան-  
քի մէջ բարիք, թէ այդ լոկ խօսքեր  
են։ Փորձեցէք այդ, աշխատեցէք վի-  
րաւորողի չարը չարով հասուցանելու  
փոխարէն, վատ կեանքով ապրող և  
զանազան արաներ ունեցող մարդկանց  
յականէ դատապարտելու փոխարէն—  
աշխատեցէք՝ չարին բարութիւնով պա-  
տասխանել, մարդու մասին ոչինչ վատ  
բան չասել, մինչև անդամ անասուննե-

րի հետ, շան հետ կոպիտ չվարուել, այլ  
միշտ բարեսրտութեամբ և փաղաքշան-  
քով. ապրեցէք այդպէս մի օր, երկու  
օր կամ աւելի (փորձի համար) և հա-  
մեմատեցէք ձեր արդ ժամանակուայ  
հոգեկան զբութիւնը այն զբութեան  
հետ, որ սրանից առաջ ունենում էիք:  
Փորձեցէք այդ, և դուք կտեսնէք, թէ  
ինչպէս թախծուա, բարկացած և ծանր  
զբութեան փոխարէն, դուք կլինիք պայ-  
ծառ, ուրախ, զուարթ:

(Եւ ապրեցէք այդպէս երկրորդ և եր-  
րորդ շաբաթը և դուք կտեսնէք, թէ  
ինչպէս ձեր հոգեկան զուարթութիւնը  
դնալով հետզհետէ կաճի և ձեր գործե-  
րը ոչ միայն չեն քայքայուի, այլ միայն  
աւելի և աւելի եռուն լնթացք կստա-  
նան:

Միայն փորձեցէք այդ, սիրելի եղ-  
բայըներ, և դուք կտեսնէք որ սիրոյ

ուսմունքը խօսքեր չեն, այլ գործ,  
բոլորի սրտին մօտիկ, ամենքին հասկա-  
նալի և հարկաւոր մի գործ:





Արևելյան թագավորություններ



Նոյն գրավաճառանոցում վաճառւում են  
հայ մատենագիրների երկերը և բազմաթիւ  
պարբերական հրատարակութիւններ, զգալի  
գեղջով:

Դիմել Թիֆլիս, «ՏԱՐՈՒ» գրավաճառաւոնց, Գеорգևская յլ., № 5, Կիւրեղ Մ. Բրինձեանցին:

«Ազգային գոադարան»



NL0146202